Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-869-10.04.2010,15.09.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 97.1-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Պետատոմհսկողության մարմինների» բառերը փոխարինել «Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի» բառերով.

2) դիսպոզիցիայում «պետատոմհսկողության մարմինների» բառերը փոխարինել «միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 97.4-րդ հոդվածի վերնագրում և դիսպոզիցիայում «Պետատոմհսկողության մարմինների» բառերը փոխարինել «Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 185-րդ և 206^2-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 223-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 223. Առաջին ատյանի դատարանները

Առաջին ատյանի դատարանները քննում են՝

1) սույն օրենսգրքի 40^1, 40^3- 40^7, 53, 97^2, 97^3, 147, 166^1 հոդվածներով, 175 հոդվածի երկրորդ մասով, 180^1, 182 183^1, 189^2 - 189^6, 189^8 - 189^{10} հոդվածներով, 198^2 հոդվածի չորրորդ մասով և 206^5, 206^8 հոդվածներով նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.

2) սույն օրենսգրքի 40^2, 170^5, 189^7 հոդվածներով և 198^2 հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով.

3) սույն օրենսգրքի 206^9 հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 232-րդ հոդվածում՝

1) վերնագրում և առաջին մասում «Պետատոմհսկողության մարմինները» բառերը փոխարինել «Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն» բառերով.

2) երկրորդ մասում «Պետատոմհսկողության մարմինների» բառերը փոխարինել «Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի» բառերով.

3) երկրորդ մասի 1-ին կետում «պետատոմհսկողության մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահը» բառերով.

4) երկրորդ մասի 2-րդ կետում «պետատոմհսկողության տեսչության պետը» բառերը փոխարինել «միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահի համապատասխան տեղակալը, ատոմային էլեկտրակայանում կոմիտեի տեսուչը» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 254-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 254. Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը

Վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք), իսկ առաջին ատյանի դատարանի իրավասությանը վերապահված հարցերով՝

1) սույն օրենսգրքի 40^1, 40^3, 40^4, 40^6 և 40^7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ իրավասու ընտրական հանձնաժողովը.

2) սույն օրենսգրքի 166^1 և 183^1 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ համատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը.

3) սույն օրենսգրքի 53 հոդվածով, 175 հոդվածի երկրորդ մասով և 180^1, 189^8 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ ոստիկանության իրավասու մարմինը.

4) սույն օրենսգրքի 97^2 և 97^3 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն.

5) սույն օրենսգրքի 182 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով՝ Հայաստանի Հանրապետության

պաշտպանության նախարարության կամ ոստիկանության համապատասխան մարմինը.

6) սույն օրենսգրքի 189^2 – 189^6 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ լեզվի պետական տեսչությունը.

7) սույն օրենսգրքի 147, 189^9 և 189^{10} հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը.

8) սույն օրենսգրքի 198^2 հոդվածի չորրորդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով՝ հարկային տեսչության կամ աշխատանքի պետական տեսչության մարմինները.

9) սույն օրենսգրքի 206^5 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով՝ հարկադիր կատարման ծառայությունը.

10) սույն օրենսգրքի 206^8 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով՝ մարդու իրավունքների պաշտպանը.

11) սույն օրենսգրքի 206^9 հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմինը (պաշտոնատար անձը):

Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի 40^2, 170^5, 189^7 հոդվածներով, 198^2 հոդվածի հինգերորդ մասով և 257 հոդվածներով նախատեսված դեպքերում:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածի համարը	Առաջարկությունը	Հեղինակի եզրակացությունը
«ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ				
1	ՀՀ Կառավարություն	Վերնագիր 1-ին հոդված	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»	Առաջարկությունն ընդունված չէ, քանի որ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են «Հայաստանի Հանրապետության» բառերը, դրա ընդունման օրը և օրենսգրքի վերնագիրը:
2	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	ՀՀ դատական օրենսգիրքը դատարանի կողմից կայացրած «մասնավոր որոշում» հասկացություն չի նախատեսում	Առաջարկությունն ընդունված չէ, քանի որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206^3 –րդ հոդվածն ուժը կորցրած է չանաչվել:
3	Հեղինակներ	4-րդ հոդված (փոփոխվող 223-րդ հոդվածի 1-ին մաս)	Հանել «206^3» թիվը	+
4	Հեղինակներ	4-րդ հոդված (փոփոխվող 223-րդ հոդվածի 1-ին մաս)	«206^3» թիվը փոխարինել «206^9» թվով, իսկ «մասնավոր որոշումը կայացրած դատարանի» բառերը փոխարինել «դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմնի» բառերով	+
5	ՀՀ կառավարություն	3-րդ, 4-րդ, և 6-րդ (նոր խմբագրությամբ՝ 4-րդ, 5-րդ և 7-րդ) հոդվածներ	Համապատասխան մասերում նշված հոդվածների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի	Առաջարկությունն ընդունված չէ, քանի նշված կետերը լրացվել են համապատասխան հոդվածների կետերի միջև՝ լրացուցիչ (նույն

			մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ դրանք անհրաժեշտ է նախատեսել ոչ թե «պրիմ», այլ լրացուցիչ համարով	է՝ «պրիմ») համարով, իսկ այդ դեպքում՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի կետերի համարի փոփոխություն չի կատարվում
6	Հեղինակներ	6-րդ հոդված (փոփոխվող 254-րդ հոդվածում)	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մասով. «11) սույն օրենսգրքի 206^{9} հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմինը:»:	+
7	Հեղինակներ	6-րդ հոդված (փոփոխվող 254-րդ հոդվածի վերջին պարբերությունում)	«, 206^{3}» բառերը հանել:	+
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ				
3	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	1-ին կետում ներկայացված դիտողությունը	Առաջարկությունն ընդունված չէ (տես՝ 1-ին կետի առաջարկության եզրակացությունը)
4	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված 1-ին մաս	Հանել «առաջին պարբերությունում» բառերը	Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծում «առաջին պարբերությունում» բառերը բացակայում են